



Մայիսի 20-ին, Կիրակնօրյա պատարագից հետո, Թբիլիսիի Սուրբ Էջմիածին Եկեղեցու բակում, հանդիսավորությամբ նշվեց Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Համբարձման տոնը: Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու «Հայարտուն» մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ, եւ կազմակերպչական հարցերով պատասխանատու Նարինե Ղուլչյանի ջանքերով, քրիստոնեական խորհուրդ ունեցող Համբարձման տոնը վերածվեց ժողովրդական տոնահանդեսի:

Կիրակնօրյա պատարագի եկած հավատացյալները չէին շտապում տուն վերադառնալ: Նրանց հետաքրքրության պատճառը բակում պտտվող գույնզգույն ծաղկեպսակներով աղջիկների եւ ջահել հարսների աշխուժությունն էր, սպիտակ շորերով հրեշտակները, ազգային տարազով տղաներն ու աղջիկները - ամեն ինչ ճիշտ այնպես, ինչպես նկարագրել է Մեծ Լուռեցին իր «Անուշ» պոեմում:

